

Վ. Գ. Սվազյան

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ ԲԱՆԱՀԱՎԱՔՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Նշանակալից ու կարևոր գործ է կատարել Ս. Հայկունին թե՛ որպես մանկավարժ ու հասարակական գործիչ և թե՛ որպես ազգագրագետ ու բանահավար:

Սույն հոդվածի նպատակն է, առանց մանրամասների մեջ խորանալու, տպագիր ու անտիպ նյութերի հիման վրա, ընդհանուր գծերով բնութագրել Ս. Հայկունու բանահավաքչական գործունեությունը և այն խթանող հասարակական-քաղաքական պայմանները:

Գործունեության ասպարեզ դուրս գալով 19-րդ դարի 60—70-ական թվականների ազգային-ազատագրական զարթոնքի դարաշրջանում՝ Ս. Հայկունին իր ամբողջ գործունեությամբ արձագանքել է հայ ժողովրդի պատմական կյանքում տեղի ունեցած իրադարձություններին, սկսած Զեյթունի ապստամբությունից մինչև սուլթանհամիդյան արյունոտ եղեռնը:

Քաղաքական ճնշումն ու տնտեսական շահագործումը մի կողմից, ազգային արժանապատվության ոտնահարումը մյուս կողմից ուժասպառ էին անում արևմտահայությանը բնաջնջվում էր բաղմադարյան հարուստ մշակույթ ունեցող հայ ժողովուրդը, ոչնչանում էին նրա ստեղծած նյութական արժեքները, կորչում, անհետանում էր նաև նրա մայրենի լեզուն:

Հասարակական-քաղաքական այս իրադարձությունները հրապարակ հանցին մարդկանց, որոնք ամբողջ ուժով ու եռանդով նվիրվեցին «Հայկական հարցը» յուրովի լուծելու խնդրին: Հանդես եկավ Գարեգին Սրվանձտյանցն իր համազգային կոչով. ըստ որի՝ «Օտարին պետք չէր բան հուսալ», անհրաժեշտ էր ամբողջ աշխարհին ցույց տալ «Թե մենք ալ ազգ մի ենք, մեր պատմության և հայրենյաց արժանիքը մեր վրա ցուցնելու դարուս լուսավորության զինքերով սպառազինվիլ, գիտությամբ զորանալ. միության միմանալ, գործել և պահպանել մենք զմեզ, պատրաստել մայրեր, հասցնել հայրեր, զրկել զիրենք և տալ այս նպատակին համար: Այս է մեր միակ փրկության ճամփան»:

Այդ նույն ժամանակ հասունանում և առնականանում է ժողովրդական մշակների հուժկու մի բանակ, որի մեջ իր անփոխարինելի ավանդն ունի նաև Սարգիս Հայկունին: Հայ ժողովրդի ֆիզիկական գոյության նկատմամբ Ս. Հայկունու մտահոգությունը սերտորեն աղերսվում էր այդ նույն բազմաշարժար, բայց տաղանդավոր ժողովրդի հողերը դանձերը պահպանելու և ամահացնելու ձգտումին:

Ս. Հայկունին, որպես ժողովրդի ծոցից դուրս եկած, նրա հետ միասին սմեն տեսակի զրկանք ու տառապանք ճաշակած անձնավորություն, քաղա-

1 Փորձ, Պոլիս, 1879, № 4, էջ 165:

քական-հասարակական բարձունքներից դիտելով երևույթները, իր ավագ գաղափարակից ու գրչակից Գր. Սրվանձտյանցի՝ նման հանգել է այն ճիշտ եզրակացության, ըստ որի ժողովրդին դաստիարակելու, նրան ինքնագիտակցության բերելու համար անհրաժեշտ է օգտագործել հենց իր՝ ժողովրդի հնարավորությունները, հետևաբար և ժողովրդական բանահյուսությունը, որի մեջ գեղարվեստորեն արտացոլվել է և՛ ժողովրդի կենցաղն ու նրա բարոյական բարձր հատկանիշները, և՛ հայրենասիրությունը, և թե բոնությունը չհանդուրժող նրա հերոսական ոգին:

Ահա հարցեր, որոնք այնքան անհրաժեշտ էին առանձնապես 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին՝ հայ ժողովրդի ամենաողբերգական, բայց և ամենից բախտորոշ այդ ժամանակաշրջանում:

Սխտեմատիկ ու կատարյալ ուսման պակասն ինքնակրթությամբ լրացրած Ս. Հայկունին, Տրապիզոնի Շանա գյուղում յոթ տարի մանկավարժական-հասարակական գործունեություն ծավալելուց հետո, 1879 թ. Պոլսում հիմնադրված Արարատյան ընկերության հանձնարարությամբ, ավագ ուսուցչի պաշտոնով առաքվում է Ալաշկերտ: Ալաշկերտում մի ամբողջ տասնամյակի ընթացքում, հետագայում նաև այլ վայրերում, նա մինչև իր կյանքի վերջը ծավալում է բանահավաքչական-ազգագրական բազմաբովանդակ գործունեություն²:

Ս. Հայկունին հավաքում ու գրի է առնում ժողովրդի նյութական ու հոգևոր հարստությունները՝ տեղանքի և աշխարհագրական միջավայրի հետ միասին նկարագրելով բերդերն ու ամրոցները⁴, վանքերի ու եկեղեցիների նկարագրի հետ միասին տալով ձեռագիր հիշատակարանների ու մատյանների մանրամասն ցուցակներն ու բովանդակությունը⁵, ժողովրդական կենցաղի, նիստ ու կացի հետ միասին տալով նրա զբաղմունքն ու արհեստները⁶, հավատքն ու պաշտամունքը⁷ և վերջապես նրա հոգևոր ու մտավոր հարուստ կարողությունների արգասիք հանդիսացող բանավոր ստեղծագործության բազմաթիվ ու բազմերանգ նմուշներ, որոնք նշանակալից չափով հարստացնում են հայ ժողովրդական բանահյուսության գանձարանը:

Մեր նպատակն է սույն հոդվածով ոչ թե վերլուծել Ս. Հայկունու գրի առած բանահյուսական նյութերը, այլ միայն ուրվագծել նրանց ընդհանուր պատկերը և նշել բանագիտական արժեքը:

2 Դեպի Արևմտահայաստան կատարած իր ճանապարհորդության ընթացքում (1878 թ.) Գր. Սրվանձտյանցն անձնապես ծանոթանում է Ս. Հայկունու մանկավարժական գործունեությանը և բարձր գնահատում նրա ջանքերը: Ամենայն հավանականությամբ, հայ բանագիտության ռահվիրայի հետ ունեցած այդ հանդիպում-զրույցները բարերար ազդեցություն են ունենում Ս. Հայկունու վրա՝ ուղենշելով նրա բանահավաքչական գործունեության հետագա ընթացքը:

3 Ս. Հայկունին իր հավաքած հոկայական նյութերի միայն մի մասը կարողանում է մեծ դժվարությամբ անվթար հասցնել էյմիածին (1890 թ.) և տպագրել, մյուս մասը փախուստի և այլ տխուր պատահարների ժամանակ անհետ կորել են, իսկ մնացածը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Պատմության, ինչպես և Գրականության ու արվեստի թանգարաններում:

4 Տե՛ս Աբուղկեթ գյուղն ու բերդը, «Երկրագունդ», 1885, Պոլիս, № 8, էջ 371—373:

5 Տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Ս. Հայկունու Ֆոնդ:

6 Նույն տեղում, վավ. 58—60:

7 Նույն տեղում, վավ. 61—68:

Մեծ է Ս. Հայկունու բանահավաքչական վաստակը ինչպես հայ, նույնպես և քուրդ ժողովուրդների համար: Հայկունին անհուն ատելությամբ լցվելով թուրք ռենակալության ձեռքին գործիք դարձած քուրդ բեկերի նկատմամբ, միաժամանակ, որպես իր ժամանակի առաջավոր մտածող խոր սեր ու համակրանք լի տածում ճնշված եղբայրական քուրդ ժողովրդի նկատմամբ: Այդ ջերմ վերաբերմունքով է նա գրի առել ինչպես քրդական ժողովրդական վիպերգերն⁸ ու առածները⁹, նույնպես և նրանց կենցաղի ու սովորության մանրամասները¹⁰:

Անխոնջ բանահավաքն աշխատել է նմուշներ տալ նաև հայ բանահյուսության, գրեթե բոլոր ժանրերից:

Եթե Գ. Սրվանձությանցին է պատկանում հայ ժողովրդական էպոսը հայտնաբերելու պատիվը (1872), որին հաջորդեցին Մ. Աբեղյանի (1886), Դ. Հովսեփյանի (1891) և Բ. Խալաթյանցի (1898) մոկաց պատումները, ապա Ս. Հայկունին իր նոր գրառումներով ոչ միայն համալրեց ու ամբողջացրեց էպոսի մինչ այդ գոյություն ունեցող պատումները, այլև առաջինը հայտնաբերեց Շատախի ու Արարատի տարբերակներն իրենց անաղարտ ու ամբողջական վիճակով:

Նրա գրի առած շորս պատումները հրապարակվել են «էմինյան ազգագրական ժողովածուի»¹¹ և Դ հատորներում, իսկ հետագայում իրենց արժանի տեղն են դրավել նաև «Սասնա ծռեր»-ում¹²:

Դիտելի է այն, որ Ս. Հայկունու գրի առած արարատյան պատումի մեջ ուշագրավ նորույթ է կենցաղային, իրավական ու հավատալիքային բնույթի դրվագների առկայությունը, օրինակ՝ Սասունի ճանապարհին դեղձունը մեղադրվում է Սադնասարի (իմա՝ Սանասար) հետ և պարտվելով ասում.

Ես էլ թագավորի աղջիկ եմ,
Ես օրթում ի կիրե
Ինչ մարդ իմ քամակ տար գետին
Ես ընդրան առնեի
Դու ընձի մարդ, ես էլ քեզի կնիկ...¹³

Եթե կանացի այս հանդուգն առաջարկը մայրիշխանության սոցիալատիկական հասարակության մի վերապրուկն է, ապա Մսրա Մելիքի արլունով «Թղթիկ» գրելը մեզ հիշեցնում է ժողովրդի մեջ տարածված արյամբ վրեժ լուծելու դարերով օրինականացված սովորույթը¹⁴: Եթե Դավիթը մերժում է Մսրա Մելիքի այրու հետ ամուսնանալու առաջարկը ասելով՝

Ես մորե վոր ծնվեի իմ գառնարատ (գառն անարատ) եմ
Ես յեմ խալալ լեշ ձեր խարամ լեշիր չըմ խառնի¹⁴,

8 Տե՛ս «էմինյան ազգ. ժողովածու», հատ. Ե:

9 Նույն տեղում, հատ. Զ:

10 Տե՛ս «Բաղրևանդ Ջրարաշխ գավառ»:

11 Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանյանի խմբագրությամբ լույս ընծայված Ա. Բ (I և II մաս) հատորներում:

12 «Սասնա ծռեր», Բ, 1951, էջ 245:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 265:

14 «Սասնա ծռեր», Ա, 1939, էջ 678:

ապա փոքր Մհերն իրեն 40 օր հորի մեջ պահած պատավիճակն Վահանձնորեն պատասխանում է.

Ես անբախտություն չեմ անի,
Մեր ազգի մեջ էգ բան չեմ,
Քու աղջիկ ըլլի իմ հանդուժ հաթուն մոր նման¹⁵,

դրսևորելով ժողովրդի բարոյական մաքրության բարձր հատկանիշը: Տեղիս կլինի հիշել նաև Փոքր Մհերի խոսքերն՝ ուղղված Ձենով Սհանին.

Քու կնիկ բեբախտություն արավ ինձ վրա.
Իմ սիրտ դաբուլ չանի, որ ըստե մնամ¹⁶:

Եվ այսպես, բարոյական անաղարտության ու արդարության պաշտպան Մհերը, չդիմանալով տիրող անօրեննություններին, մտնում է Ազոավի քարը և միայն Համբարձման օրերին

Ըլլի, աշխարհ թամաշա կանի,
Մի ախ կքաշի, էլի կքաշվի կմտնի ներս¹⁷:

Պատահական չէ, որ Ս. Հայկունու այդ ծավալուն պատումին, որպես «վերջանք», կցված է բարոյախոս մի երգ: Իր բուն էությամբ ժողովրդական այդ աղոթքի մեջ ասացողը բազմաթիվ սրբավայրեր և ուխտատեղիներ զորավիգ կանչելով՝ նախախնամությունից «միլեթի» համար ողորմություն է հայցում.

Ընձի մարդ անես,
Մարդամեջ տանես,
Դուշմանաբուժ չանես, ամեն¹⁸:

Ամեն ինչից առաջ բարոյապես կատարյալ ու լիարժեք «մարդ» լինելու այս պահանջը, անշուշտ, պիտի հուզեր ու գրավեր, ժողովրդի սովորության և իրավունքի խորխորատները թափանցած, բանահավաք-ազգագրագետին:

Ս. Հայկունու դրառումների մեջ ուշագրավ են նաև մի շարք այլ հետաքրքրական գծեր, որոնք ազգագրական արժեք են տալիս այդ պատումներին. ինչպես, օրինակ՝ Դավթի տարազների նկարագիրը¹⁹, ժողովրդական զանազան հավատալիքների (երազատեսություն, անեծքներ և օրհնանքներ) և այլնի վերապրուկները²⁰ ամենայն մանրամասնությամբ տեղ են գտել նրա դրի առած պատումներում:

¹⁵ Նույն տեղում, Բ, 1951, էջ 313:

¹⁶ Նույն տեղում, էջ 316:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, էջ 318 (ընդգծումը մերն է.—Վ. Ս.):

¹⁹ Տե՛ս «Սասնա ծռեր», Ա, էջ 671:

²⁰ Տե՛ս «Սասնա ծռեր», Բ, էջ 266, 272, 273, 284:

«Սասունցի 'Դավիթ» էպոսի խնդրո առարկա տարրերակները բնորոշվում են նաև հեքիաթային երանգավորմամբ: Եթե Գր. Սրվանձայանցի պատումի մեջ Դավիթն ու հանդուլը ուղղակի հանդիպում են հաս բախում²¹, ապա Ս. Հայկունու մոտ էպիկական շնչով է պատմվում, թե ինչպես ղարիբ Դավիթը ձիով մտնում է հաս բախեն «Ձին կրթողնը վարդ ըռահաններու մեջ կերեծցնե», իսկ ինքը՝ «Անմախական հավուզի վրեն կպառկի կքնի»:

Այստեղ հեքիաթային Հյուրիմալաքներին հիշեցնող հանդուլն ուղարկում է իր աղախինն հայտնելով.

Սձ ուր պոռտով, խավք ուր թևով,
Մեր խաս բախչի վրեն չէր իջե.
էն ի՜շ հատ ունի, ուր գլխին գա,
Հարկի բաղան, քակի, մտնի մրջ բախին,
Ձին թրղնի մեջ, էրեծաւ
Թրղ ըլնը, հա՛
Ափսուա ի, թե չէ ֆերեզներ կըգան,
Ինու ջոջ բրդուջ ինու ականջ կրթողնին²²:

Ս. Հայկունու գրի առած Արարատյան տարբերակում Փոքր Մհերը պայքարում և ապա՝ եղբայրանում է Քուլընկի դևի հետ: Վերջինս առասպելական Տորք-Անգեղին հիշեցնելով հանդերձ աղերսվում է որսի աստվածության հետ: Վերոհիշյալ կերպարը ևս նորույթ ու թարմություն է հաղորդում էպոսի այս պատումին: Կարելի է հիշել նաև Դավիթի Գյուրջիստան մեկնելու դրվագը, երբ նա իր որդու համար ապարանջան է տալիս հանդուլին, և կամ դրա հետ կապված հետագա դեպքերը, որոնք ինքնատիպ են դարձնում էպոսի նաև հիշյալ տարբերակը:

Ս. Հայկունին «Սասունցի 'Դավիթ» այս շուրս պատումներից բացի գրի է առել նաև «Շիրին շահ և Բահր» վիպերգը: Բանահավաքի կարծիքով այս ստեղծագործությունն ևս մեր էպոսի մի ճյուղն է, այսինքն մի տարբերակը²³, սակայն այդ ենթադրությունը հատուկ ուսումնասիրության է կարոտ:

Ս. Հայկունու գրի առած բանահյուսական նյութերի մեջ արժեքավոր բաժին են կազմում «Մոքոս», «Կարոս խաչ», «Կուգուան Ասլան» (Ասլան Աղա), «Հեկեքսիանոս» և այլ ժողովրդական վիպերգեր: Ս. Հայկունուն է պատկանում «Մոքոս» վիպերգի հայտնաբերման պատիվը: Գլխավոր հերոսը՝ Մոքոսը²⁴, «Մովի քենարեն» (կզրից) պալով, ոչ միայն սուլթանի համար Բաղդատ քաղաքն է կառուցում իր սրբավայրով, այլև, բազմաթիվ խոչընդոտներ հաղթահարելով, հավատափոխ է անում հեթանոսներին: Վիպերգում աշխատասեռ ու շինարար Մոքոսի կերպարին հակադրված են «ղոռա ու բռնավոր» կռապաշտ թագավորները՝ Փանփուլն ու Ջինաքյարը, որոնք դաժանորեն տիրում են ուրիշ ժողովուրդների հողին ու ջրին: Նրանց դեմ պայքարելու ընթացքում Մոքոսին զորավիգ են կանգնում ս. Տիկինն ու Մանուկ տղան: Մոքոսի հետ

21 ՏԼ՛ս նույն տեղում, էջ 35:

22 «Սասնա ծռեր», Ա, էջ 681:

23 ՏԵ՛ս ՀՍՍՖ Գրականության և արվեստի թանգարան, Գր. հալաթյանի ֆոնդ, բաժին 5, վավ. 431, 1901 թ. մարտի 10-ի Ս. Հայկունու նամակը:

24 ՏԵ՛ս Ս. Հայկունի, Մոքոս, 1896, էջմիածին:

կապված այս և նման հրաշապատում գրվագներն առաջին հայացքից կրոնական ստեղծագործության տպավորություն են թողնում: Վեպի սյուժետային պոթի զարգացման և երանելի Մովկիոսի Վկայության միջև²⁵ մեր կատարած համեմատությունը ևս այդ է հաստատում: Սակայն այդ դեռ բոլորը չէ: Դեպքերի ու դեմքերի նմանության արտաքին կեղևի տակ թաքնված են ժողովրդական ստեղծագործությանը բնորոշ խիստ ուշադրավ հրեույթներ: Առանց մանրամասների մեջ խորանալու, նշենք, որ այդ վարքագրությունը կապվում է 3-րդ դարում քրիստոնեության մուտքի հետ: Հեթանոսության դեմ մղված պայքարում նահատակներից մեկի մասին հորինված այդ վարքը ժամանակի ընթացքում պատմական դեպքերի ազդեցության տակ զարգանում ու վերափոխվում է:

Ինչպես ամեն մի ժողովրդական բանավոր ստեղծագործություն, նույնպես և «Մոքոս» վեպը, ունեցել է իր պատմական զարգացումը: Դուրս և անհատական-գուսանական ստեղծագործության ձևով հանդես գալով, այն իր մեջ ներառել է նաև 5-րդ դարի Վարդանանց հերոսամարտից արձագանքներ: Գտնվել են²⁶ և ժողովրդական այլ քաջերի սխրանքները գեղարվեստորեն արտացոլել են վիպական Դարեգիների հերոսական կերպարում: Վերջինս երկնային կարմիր կանաչ լույսի առաջնորդությամբ ոչ միայն թագավորության գլուխ է անցնում, այլև հավատափոխ է անում կռապաշտներին:

Հետագայում ևս այդ վեպը զարգանալով իր մեջ ընդգրկել է նաև արարական արշավանքների և նույնիսկ բոլորովին ուշ շրջանի՝ հայկական կոտորածներին հատուկ տրամադրություններ՝ արտահայտելով անհուն թշնամանք ընդդեմ սուլթանական բռնապետությանը: Բանահավաքը ևս նկատելով այդ հանգամանքը, իր հրատարակության առաջարկում վիպասացի մասին գրում է. «Մինաս՝ Մոքոսի դեպքերն, Զինաքյարի գործած գազանություններն կնրմանեցներ ներկա տաճկական բարբարոսություններու...»²⁷:

Պատմական այսպիսի ընդարձակ ֆոնի վրա «Մոքոս» ժողովրդական վիպերգն իր արտահայտած գաղափարներով դառնում է հայ ժողովրդի ազատասիրական ձգտումների լավագույն արտահայտություններից մեկը:

Սոսկ արտաքին կրոնական երանգավորում ունեցող հրաշագործ Մոքոսը նախ և առաջ աշխարհիկ կյանքի ու վայելքի բոլոր նյութական բարիքներն ստեղծող ժողովրդական այն վիթխարի ուժն²⁸ է, որը անցյալում, դարեր շարունակ աշխատելու ու տառապելու է շահագործող դասակարգի համար: Պատահական չէ, որ Մոքոսը Բաղ թագավորի համար կառուցում է Բաղդատը և կամ սուլթանի գվարճամուկությանը հազուրդ տալու նպատակով ամառանոց է շինում, հեռու վայրերից անմահական ջուր բերելով, բուրաստաններ աճեցնում, բայց, այնուամենայնիվ, որպես աշխատավորության ներկայացուցիչ, նա երկար ժամանակ չի նկատվում սուլթանի կողմից:

25 Տե՛ս Մ կ ր ո ի շ Ա վ դ Ե Ր Յ ան, Լիակատար վարք և վկայություն սրբոց, 1812, Վենետիկ, հ. Գ, էջ 164—179:

26 «Յաղգէն Որումնձտայ Զառաջաղէմն Գարեգին»: Տե՛ս Ե ե ղ ի չ է ի պատմություն վարդանանց, Մոսկվա, 1892, էջ 110:

27 Ս. Հ ա յ կ ո ս ի, Մոքոս, էջմիածին, 1896, էջ Բ:

28 «Մոքոս» հայ ժողովրդական երգ, խոշոր բառից է Տե՛ս Հ. Սվազլյան, Հայոց անձնանունների բառարան Գ, 1946, Երևան, էջ 473:

Վիպերպում հանգես եկող ս. Տիկինն ու Մանուկ տղան բրիստոնեական հավատքը սիմվոլացնելով հանդերձ, իրենց կատարած դերով դառնում են հայ ժողովրդի կենսունակությունն ու հերոսական ոգին մարմնավորող խորհրդանշաններ:

Վեպի այս հիմնական գաղափարին համահնչուն է Ս. Հայկունու գրի առած «Վարոս խաչ» ժողովրդական վիպերգը, որտեղ Վարոս խաչը ևս խորհրդանշում է ստարերկրյա նվաճողների դեմ հայ ժողովրդի ցուցաբերած հերոսական ու մարտունակ ոգին²⁹:

Միջնադարի կրոնական գաղափարախոսության քողով է պատած նաև Ս. Հայկունու գրի առած «Հելեքսիանոս» վիպական երգը: Ժողովրդական այդ ստեղծագործությունն առաջին հայացքից մի ճգնակյացի վարքագրություն է հիշեցնում: Հանդերձյալ կյանքի հավատքով ներշնչված Հելեքսիանոսը հրաժարվում է և՛ հոր թագավորությունից, և՛ հարսնացուի հետ սպասվող հրջանկությունից, գնում է Ծովի կղզին, անցորդներին հպարտությամբ ասելու.

Անոթցեր իմ, խոզն իմ կերեր.

Ծարավցեր իմ, շաղն իմ լիզեր³⁰,

որպեսզի «խալալ սրտով» հոգին ավանդեն:

Հելեքսիանոսի մահից հետո, նրա վերադարձին երկար սպասած, հարսնացուն հուսահատությունից ինքն էլ է մեռնում: Այստեղ ուշագրավ է մահվան իմաստավորումը մեկի և մյուսի մոտ: Ըթե Հելեքսիանոսը՝ խույս տալով ամեն մի աշխարհիկ վայելքից, չի ենթարկվում «Քոռ դյուշմանին» (իմա՝ սատանան) և մեռցնում է իր մեջ մարդկայինը՝ աստիճանաբար մեռցնելով նաև իրեն, ապա՝ նրա հարսնացուն «աշխարհի քեֆը վայելելու պատրաստ» Մարգարիտն, իր սիրած մարդու մահից հետո անիմաստ է համարում ապրելը և մեռնում է նրա հետ:

Աշխարհիկ կյանքի պահանջն այս վիպական երգում իր նախնական դրսևորմամբ իսկ հարցականի տակ է առնում ճգնակյաց կյանքը: Այնինչ վիպերգի ենթատեքստը «աշխարհի քեֆը» վայելելու մի հանդուգն հրավեր է:

Երկրային կյանքի լավագույն արժեքավորումն ենք գտնում Ս. Հայկունու գրի առած «Կուզուան Ասլան» վիպերգում: Համեմատաբար ավելի ուշ ժամանակաշրջանի արգասիք հանդիսացող այս ստեղծագործության կենտրոնական դեմքը Ասլանն է.

Նա կիսմեր նռան գինին, քեֆ-խոշութեն կաներ,

Չդիտեր մեռնել կա մրջ աստնվորիս³¹:

Այստեղ արդեն կյանքի սերը դառնում է մարդկանց հարաբերությունները բնութագրող շափանիշ: Ըթե ծնողները չեն անսում որդու թախանձանքներին, ապա սիրած կինն իր կյանքն է զոհում, սերը կյանքով է հատուցում և այդպես հաղթում մահվան:

29 «Սասունցի Դավիթ» էպոսի խաչ Պատերազմին ևս նույնանման իմաստավորում է ստացել:

30 Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. 2, էջ 7:

31 Նույն տեղում, էջ 8:

Այս բոլորի հետ միասին Ս. Հայկունու հավաքած նյութերի մեջ կան նաև այնպիսի ստեղծագործություններ, որոնք առավել ճշգրտությամբ են վերարտադրել անցյալում պետականությունից ու անկախությունից զրկված հայ ժողովրդի ազգային ողբերգությունը³²։

Այս և սրա հետ կապված մի շարք հարցերի գեղարվեստական ու քնարական վերարտադրությունն ենք գտնում ինչպես «Մոկաց Միրզա» վիպերգում, նույնպես և ժողովրդական բազմաթիվ այլ երգերի ու խաղիկների մեջ, որոնց զանազան տարբերակները Ս. Հայկունին ամենայն բարեխղճությամբ հավաքել ու ամփոփել է «Էմինյան ազգագրական ժողովածու»-ի 2 հատորում։

Բացի վերոհիշյալ բնույթի երգերից, անխոնջ բանահավաքի գրչով մեզ են հասել նաև մեծ քանակությամբ հարսանեկան երգեր ու պարերգեր, ինչպես օրորոցային ու վիճակի, նույնպես և զավեշտական ու աշխատանքային երգեր, որոնք ևս ներկայացված են բազմազան տարբերակներով։

Բացի այդ Ս. Հայկունին գրի է առել նաև բազմաթիվ առածներ ու ասացվածքներ, հանելուկներ ու բանադրանքներ, շուտասելուկներ ու ծածկաբանություններ, ինչպես և այլ մանրապատում ստեղծագործություններ³³, որոնք ոչ միայն հարազատորեն ներկայացնում են մեր հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, այլև պերճախոս ապացույցներ են անխոնջ բանահավաքի անսահմանափակ հետաքրքրությունների։

Ժողովրդական կենսափոխակերպության արտակարգ ընկալումով աչքի ընկնող ստեղծագործություններից կանգ առնենք բանահավաքի գրի առած հեքիաթների վրա³⁴, հեքիաթներ, որոնց քանակն ու որակը դեռևս իր ժամանակին զարմացրել է Գր. Խալաթյանցին։

Անդրադառնալով Ս. Հայկունու գրի առած հեքիաթներին, պրոֆ. Գր. Խալաթյանցը նշում է. «Մինչ այժմ հեքիաթը այնպիսի ընդարձակ ծավալով ներկայացված չէ մեզանում, ինչպես Հայկունու հավաքածուների մեջ»³⁵։

Մեր օրերում անգամ այդ հեքիաթները շարունակում են պահպանել իրենց բանագիտական ու գեղարվեստական արժեքը՝ պատվավոր տեղ գրավելով «Հայ ժողովրդական հեքիաթների» ակադեմիական հրատարակության տարբեր հատորներում։

Ս. Հայկունու գրի առած հրաշապատում և իրապատում հեքիաթները բոլոր ժողովուրդների մոտ տարածված հայտնի մոտիվներ պարունակելով հանդերձ, աչքի են ընկնում հետաքրքիր նորույթներով։ Նրա գրի առած հրաշապատում և իրապատում հեքիաթների մեջ հաճախ ենք հանդիպում պատմական դեմքերի ու դեպքերի վերհուշներ, լինի դա բռնակալ Սուլթան Մուրադի հետ կապված դաժանությունը, թե հայ ժողովրդի համար ճակատագրական պատուհաս դարձած պանդխտությունն իր տարբեր կողմերով³⁶։

Ս. Հայկունու հավաքած հեքիաթների մեջ ուշադրավ է նաև ժողովրդական կյանքի և սովորության տարրերի առկայությունը, եթե անտառից մի երեխա

32 Տե՛ս «Զմրուժ պառավն ու մեկուճար տղան», «Արարատ», 1896, էջ 320, Բուլանխարարառով վիպական երգ, «Արարատ», 1896, էջ 356 և «Օխան օծելի», «Արարատ», 1896, էջ 412—414։

33 Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. 2։

34 «Էմինյան ազգագրական ժողովածու» Բ և Դ հատորները պարունակում են Ս. Հայկունու գրի առած հեքիաթները։

35 «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. 2, էջ 5։

36 Տե՛ս «Էմինյան ազգագրական ժողովածու», հատ. Բ, էջ 124, հատ. Դ, էջ 343։

զտած թագավորը, որդեգրության հետ առնչվող ժողովրդական սովորության իրավունքի ընդունված պահանջները կատարելով «խոգու տղա» է դարձնում նրան³⁷ և կամ մի այլ հեքիաթում³⁸ ականատես ենք դառնում բնշիկքյարթմայի և հարսանեկան արարողության մի շարք սովորույթների, ապա՝ «Տան դովլաթ» հեքիաթում³⁹ հանդիպում ենք տնային շար ու բարի ոգիների՝ Շվոտի և Դովլաթի հետ կապված ժողովրդական հավատալիքների գեղարվեստական վերարտադրությանը⁴⁰։

Ժողովրդի մեջ տարածված և դարեր շարունակ իրենց գոյությունը հարատևած ազգագրական այս սովորույթները, անշուշտ, առկա են եղել մեր ժողովրդական հեքիաթներում, բայց հարցը այդ նյութերը հայտնաբերել և լույս աշխարհ հանելն էր։

Բացի այդ բոլորից, Ս. Հայկունու գրի առած հեքիաթները ուսումնասիրողին գաղափար են տալիս հեքիաթի ժանրի գոյացության պատմական ընթացքի, հեքիաթային կերպարների աստիճանական զարգացման ու վերափոխման, ինչպես և իմաստավորման հանգամանքների մասին։

Եթե բնության ուժերի դեմ անզոր նախամարդու երևակայությունն ստեղծում էր զանազան դևեր ու վիշապներ, որոնք մերթ այս, մերթ այն զոհաբերությունների դնով մարդկանց շնորհում էին բնությունը վերակենդանացնող երկնային ջուր կամ արևի ճաճանչ, ապա՝ ավելի ուշ շրջանի իմաստավորում պետք է փնտրել Լրեակայական այն վիշապի կերպարում, որը գլուխը բարձրացնելով քաղաքի վրա, միայն հաց է ուտում՝ սովի մատնելով բոլորին⁴¹։

Վերահիշյալ մտքի առավել ցայտուն արտահայտությունն ենք գտնում Բալդերդայիշի կերպարում⁴²։ Պորտաբույծ ու շահագործող խավերի մարմնավորումը հանդիսացող այս գեղարվեստական ընդհանրացումը բացառապես ներկայացնում է հասարակության շար ու կաշկանդիչ ուժերը։ «Մեջկապից ցած դայիշ, վերևը իսանաթ» այս տարօրինակ էակը ժամանակի տեսակետից հաջորդելով ջրագույ վիշապներին, տերն է դառնում ոչ միայն բնությունը արհեստավորող ուժերին, այլ՝ մարդկային արդար վաստակին՝ իր ամբողջ հրեշտային ծանրության տակ տրորելով մարդկային արժանապատվությունը։

Բազմաթիվ արկածների հանդիպած, տանջված ու տառապած փոքր թագավորազնի ոտքերից մինչև թևերը փաթաթվելով, Բալդերդայիշը ելնում նրատում է նրա վզին, երկար ժամանակ աշխատեցնում, նրա ուտելիքն ինքն ուտում, և երբ տղան «ախ» է քաշում, նա տիրաբար պատառախանում է՝ «Քուխոքիս իմ ձեռին ա, դու պառի չպրծնես իմ ձեռից»⁴³։

Հրեշտակերպ այս մարդ-մակաբույծի կերպարը, մարդկանց երևակայության մեջ ծնունդ առնելով դասակարգային անհավասարության պայմաննե-

37 Տե՛ս նույն տեղում, հատ. Բ, էջ 334։

38 Տե՛ս նույն տեղում, հատ. Բ, էջ 183։

39 Տե՛ս նույն տեղում, հատ. Գ, էջ 327։

40 Իրավական ու սովորույթային այս և նման հարցերին Ս. Հայկունին, որպես նետախույզ ազգագրագետ, մեկ առ մեկ անդրադարձել է՝ տալով իր մանրամասն դիտողությունները. տե՛ս «նյութեր ժամանակակից հայերի սովորության իրավունքի» (ՀՍՍՌ Պատմության թանգարան), Հայ ժողովրդական բարք ու սովորույթ (ՀՍՍՌ Գրականության և արվեստի թանգարան, Ս. Հայկունու ֆոնդ), Շվոտ և Դովլաթ, «Արարատ», 1895, էջ 210։

41 Տե՛ս «Հմինյան ազգագրական ժողովածու», հատ. Բ, էջ 382։

42 Նույն տեղում, հատ. Բ, էջ 124։

43 Նույն տեղում, էջ 128։

րում, գեղարվեստորեն ընդհանրացրել է շահագործող դասակարգին իր մարդակուլ էությունը:

Մեծ է եղել Ս. Հայկունու երախտիքը նաև ժողովրդական առակաները հավաքելու ասպարեզում: Նրա ջանքերով գրի են առնվել շուրջ 200 դավեշտական ու սրամիտ մանր ստեղծագործություններ: Այդ մանրապատումների գրեթե կեսը Ս. Հայկունին հնարավորություն է ունեցել 1907 թ. լույս ընծայել «Կենդանական վեպեր» ընդհանուր խորագիրը կրող փոքրիկ գրքույկով, իսկ մնացածները, որոնք իրական պատմվածքներ են, չեն հրատարակվել⁴⁴:

Ս. Հայկունու կողմից հատուկ ստորաբաժանման ենթարկված պարզունականների ու միամիտների, ծոերի ու հիմարների, հնարագետների ու իմաստունների մասին ստեղծված այս պատմվածքները գեղարվեստական արժանիքից բացի ունեն դաստիարակչական նշանակություն: Ահա թե ինչու երկար տարիների մանկավարժական փորձ ունեցող Ս. Հայկունին առանձնապես ուշադրություն է դարձրել այդ բնույթի ստեղծագործություններին:

Ժողովրդական առականների դաստիարակչական և ուսուցողական այդ կողմը նկատի ունենալով հայ մեծ բանաստեղծ Հովհ. Խումանյանը, ինչպես և ուրիշներ, առատորեն օգտվել են Ս. Հայկունու հավաքած նյութերից: Հետագայում՝ Մեծ Հոկտեմբերի նախօրյակին, Գ. Հայկունին ևս մշակելով իր հոր գրի առած առակաները, աշխատել է նրանց հաղորդել հեղափոխական գաղափարախոսություն:

Ինչ խոսք, որ անխոնջ բանահավաքը ոչ միայն առականների ու դավեշտական գրույցների վերափոխող ու դաստիարակիչ ուժն է զգացել, այլև ռմբռնել է ընդհանրապես ժողովրդական բանահյուսության դերն ու նշանակությունը ժողովրդին դաստիարակելու գործում:

Լինելով իր ժամանակի առաջավոր մտածողներից մեկը, Ս. Հայկունին հասարակական-քաղաքական տեսանկյունից է դիտել հայ ժողովրդի հոգևոր մշակույթը: Մական հնարավոր չէ խոսել Ս. Հայկունու բանահավաքչական գործունեության մասին առանց անդրադառնալու նրա գրառման սխտեմին:

Ինչպես արդեն նշեցինք, Ս. Հայկունին մասնագիտական հատուկ կրթություն չի ստացել, հետևաբար ինքնուրույն աշխատանքով է հաղթահարել ինչպես մանկավարժական, նույնպես և ազգագրական ու բանահավաքչական գործունեության ընթացքում պատահած դժվարությունները: Այդ հանգամանքը ոմանց առիթ է տվել նկատելու նրա գրառման հնչյունային ու բարբառագիտական որոշ թերի կողմերը⁴⁵:

Սակայն մեր բանագիտության պատմությունն ուսումնասիրելիս հարկ է նկատել, որ մեր անցյալի վաստակավոր բանահավաքներից շատ շատերը զուրկ են եղել մասնագիտական կրթությունից, հետևաբար և իրենց գրառումները չեն կարողացել բարձրացնել լեզվաբանական գիտական մակարդակի:

Հայտնի է, որ 1887 թ. Մոսկվայում լույս ընծայված «Հայ ազգագրության ծրագրի» մեջ հատուկ բաժին էր նվիրված ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքման ու գրանցման սկզբունքներին⁴⁶:

⁴⁴ Տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Ս. Հայկունու ֆոնդ:

⁴⁵ Տե՛ս «Արարատ», 1902, հունվար, էջ 75—77:

⁴⁶ Տե՛ս Գ. Բ. Խաչատրյան, Մրադիր հայ ազգագրության, 1887, Մոսկվա, էջ 86—69, 77—84:

Սակայն, դժբախտաբար, ժողովրդական ուսուցիչս իր հարկադրական փախուստի ու թափառումների ընթացքում առիթ չի ունեցել ժամանակին ծանոթանալու այդ արժեքավոր գործույթին: Եր. Խալաթյանցի ֆոնդում պահպանված նամակներից պարզվում է, որ միայն 1901 թ. հեղինակի ուղարկած ծրագիրը Ս. Հայկունու կողմից ուսումնասիրվել է մեծ հետաքրքրությամբ⁴⁷:

Այստեղից պարզ է դառնում, որ Ս. Հայկունու բանահավաքչական գործունեությունը (որը սկիզբ է առել դեռևս 1880 թվականից) իր գրառման սխառմի տարերայնությամբ հանդերձ հղել է շատ ավելի ինքնուրույն և իր նախորդների ու ժամանակակիցների համեմատությամբ ունեցել է բազմաթիվ առավելություններ, որոնք ուսանելի են նաև մեր օրերում:

Դիտելի է այն, որ Ս. Հայկունին աշխատել է նմուշներ մատուցել ոչ միայն ժողովրդական բանահյուսության բոլոր ժանրերից, այլև յուրաքանչյուր ստեղծագործությունը ներկայացրել է իր բազմազան տարբերակներով՝ ընդգծելով նրանց լեզվական ու բարբառային նրբերանգներն ու տեղային-ազգայրական ինքնատիպությունը:

Բանահավաք ժողովրդական նյութերը գրի է առել ամենայն մանրամասնությամբ ու խնամքով՝ պահպանելով նրանց անաղարտությունը: Նա իր գրառումները գրեթե չի ուղղել, չի մշակել, իսկ հարկ եղած դեպքում իր կատարած միջամտության մասին տեղեկացրել է առաջաբանում պամ առանձին ծանոթագրությամբ: Ս. Հայկունին պիտակցել է նաև մասնագիտական բացատրությունների ու ծանոթագրությունների անհրաժեշտությունը: Նա իր առանձին գրքույկներով հրատարակած գրառումներին, ըստ պահանջի, կցել է հատուկ անունների ու տեղանունների, ինչպես և դժվար հասկանալի և օտար բառերի մանրամասն բացատրություններ⁴⁸:

Սակայն, ինչպես հայտնի է, այս նույն սկզբունքը չի տարածվում «էմինյան ազգագրական ժողովածուների» տարբեր հատորներում: Արխիվային նյութերից ու նամակներից պարզվում է, որ Ս. Հայկունին վերահիշյալ հատորների նյութերը ևս հրատարակության է պատրաստել ծանոթագրություններով ու բացատրական բառարանով, նույնիսկ շեղատառերով է տպել տվել օտարամույթ բառերը: Սակայն հրատարակության տնօրեն Գր. Խալաթյանցի հատուկ հանձնարարությամբ կանխվել է այդ աշխատանքը⁴⁹:

Բանահավաքի արխիվում է պահպանվում նրա բազմազան գրառումները: Ընթացքում դուրս գրված ազգագրական, կենցաղային և այլ բնույթի շուրջ 10000 բառի մեկնաբանում: Իրկար տարիների քրտնաջան ու անխոնջ աշխատանքի արդյունք այդ «բառարանը» իր ընդգրկման հսկա ծավալով և մինչ այդ չմեկնաբանված բառիմաստների մանրակրկիտ բացատրությամբ նշանակալից երևույթ է ոչ միայն հայ բանագիտության, ազգագրության, տեղագրության ու արհեստագործության ասպարեզում, այլև այնպիսի բնագավառների համար, ինչպիսիք են բուսաբանությունն ու կենդանաբանությունը⁵⁰:

Ժողովրդի ծոցից դուրս եկած անխոնջ բանահավաքը բացառիկ վարպե

47 Տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Եր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 976:

48 Տե՛ս «Հոթութիկ և Սամել հովիկ», էջմիածին, 1895, «Մոբոս», էջմիածին, 1896:

49 Տե՛ս ԳԼԹ Գր. Խալաթյանցի ֆոնդ, բաժին 5, վավ. 976, 1902 թ. 14 հունվարի նամակը ուղղված Ս. Հայկունուն:

50 Տե՛ս Գրականության և արվեստի թանգարան, Ս. Հայկունու ֆոնդ, վավ. № 1:

տություններ կարողանում էր թափանցել այդ նույն ստեղծագործող ժողովրդի մեջ: Առանց պատվերի, այլ՝ ինքնաբերաբար հայտնաբերելով նրա հույու և մտքի գանձերը:

Այդ առումով ահա թե ինչ է պրոլետարիատի լուսավորչական մասին.

«Շատ անգամ Մինասը վարձած մոտո նստեցուցած եմ, որպեսզի ավելի շուտ գրի առնեմ, դորանով ես չեմ հաջողած. զի նա ավելի լավ կհիշեր աշխատելու ժամանակ, քան հանգիստ նստած. ինքը ևս պիտի յուր բնությունը ավելի լավ կհամարեր 20 կոպեկ օրավարձով աշխատելու քան մոտո հանգիստ նստիլ: Նորանից ավելի օգտված եմ վանքի բաղանիքի առաջ, երբ տիղմ կշաղախեր, աղյուս կթափեր, շատ անգամ որո դեմքը կդիտեի, հանկարծ ժպտալից դեմքով կերգեր կամ կպատմեր մի գեղեցիկ հատված, գրիչս որո ասածներուն շհասնելով՝ կրկին ստիպյալ պատմել կուտայի նախադասություն առ նախադասություն. այն ժամանակ հիշած հատվածը գեղեցկությունից կմերկանար, կդառնար շոր կմախք»:

II. Հայկունին բարձր գնահատելով ժողովրդի հոգևոր մշակույթը, միաժամանակ խորը հարգանք էր ցուցաբերում այդ գանձերն ստեղծող, պահպանող ու վերարտադրող բանասացների նկատմամբ: Այդ ջերմ ու հարգալից վերաբերմունքի լավագույն արտահայտությունն է այն, որ Ս. Հայկունին բանահյուսական նյութերը գրառելու հետ միասին մանրամասն նկարագրել է ասացողի ոչ միայն արտաքին հատկանիշներն ու նրա բնավորության յուրօրինակությունները, այլև ամենայն մանրամասնությամբ նշել է, թե տվյալ ասացողն որտեղ է բնակվել, ումից է սովորել այդ ստեղծագործությունը՝ անուղղակիորեն քննելով նյութի ծագման ու տարածման հետ կապված հարցերը: II. Հայկունու հավաքած նյութերի անձնագրային այս ինքնատիպությունն ակնբախ է դառնում հատկապես էպոսի տարբերակներում, որտեղ նա ի տարբերություն իր նախորդների տալիս է ընդարձակ տեղեկություններ ասացողների անձնավորության, նրանց կյանքի ու աշխատանքի մասին:

Այսպիսով Ս. Հայկունին, որպես իր ժամանակի առաջավոր մտածող, հասարակական-քաղաքական տեսանկյունից է դիտել հայ ժողովրդի հոգևոր հարստությունը: Նա այդ բոլորը հավաքել ու գրի է առել ամենայն բարեխրդձությամբ՝ առանձին խնամքով պահպանելով բանասացների ժողովրդական խոսքի անաղարտությունը: Ժողովրդի մարդը ներքին դիպրոցությամբ ըմբռնել է բանահյուսական նյութը մատուցելու մասնագիտական ու քիստական հրատարակության սկզբունքների տարրերը:

Ս. Հայկունու ինչպես մանկավարժական, նույնպես և ազգագրական ու բանահավաքական գործունեությունը կրել է ծրագրված ու նպատակասլաց բնույթ:

Նրա գրի առած բանահյուսական նյութերը գեղարվեստորեն բարձրարժեք են, տողորված են հարուստ գաղափարայնությամբ, և որ ամենից էականն է, աչքի են ընկնում ազգային ինքնատիպությամբ և աշխատավորական աշխարհայեցողությամբ: Հայրենասերի ոգին, ազգագրագետի դիպրոցությունը և գեղարվեստագետի ճաշակը ներդաշնակ միասնությամբ ուղենշում են Ս. Հայկունու բանահավաքական գործունեությունը, որն ընդգրկել է անխտիր բանահյուսական բոլոր ժանրերն ու տեսակները: Այդ կողմից նա անգերազանցելի է մեր բանագիտության պատմության մեջ: